

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

Վ Ա Զ Ե Ս Մ Բ Ա Տ Ի

Ն Ա Լ Բ Ա Ն Դ Յ Ա Ն

ВАЧЕ СМБАТОВИЧ
НАЛБАНДЯН

Ե Ր Ե Վ Ա Ն





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ

ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ

УЧЕНЫХ АРМЕНИИ

№ 50

ВАЧЕ СМБАТОВИЧ
НАЛБАНДЯН

Вступительная статья Эд. М. Джрбашяна, В. С. НЕРСИСЯНА
Библиография составлена Р. А. БАБАДЖАНЯН

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН АРМЕНИИ
ЕРЕВАН

1995

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՃՈՒՆԴԱՄԵՆՏԱԿ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

№ 50

Վ Ա Չ Ե Ս Մ Բ Ա Տ Ի
Ն Ա Լ Բ Ա Ն Դ Յ Ա Ն

Ներածականը էդ. Մ. ԶՐԲԱՇՅԱՆԻ, Վ. Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ
Մատենագիտությունը կազմել է Ռ. Ա. ԲԱԲԱԶԱՆՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 9 5

*Տպագրվում է Հայաստանի ԳԱԱ փիլիսոփայության և բանասիրության
բաժանմունքի բյուրոյի երաշխավորությամբ և ֆունդամենտալ գիտական
գրադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Կ Ո Լ Ե Գ Ի Ա

Ս. Հ. ՎԱՐԻԱՆՅԱՆ (նախագահ), Հ. Գ. ԲԱԿԼԱՎԱԶՅԱՆ,

Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ Էդ. Մ. ԶՐԲԱՇՅԱՆ

*Печатается по рекомендации бюро Отделения философии и
филологии НАН Армении и по решению ученого совета
Фундаментальной научной библиотеки НАН Армении.*

Редакционная коллегия:

**С. А. ВАРДАНЯН (председатель), О. Г. БАКЛАВАДЖЯН,
Г. Б. ГАРИБДЖАНИЯН, Р. М. МАРТИРОСЯН, В. С. НАЛБАНДЯН.**

Ответственный редактор: Эд. М. ДЖРБАШЯН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՎԱՋՆ ՍՄԲԱՏԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՑԱՆՔԻ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

- Վաչե Սմբատի նախնադասը ծնվել է 1919 թ. փետրվարի 25-ին Նոր Բայազետ (այժմ՝ Կամո) քաղաքում:
- 1936 թ. ավարտել է Նոր Բայազետի միջնակարգ դպրոցը:
- 1936—1937 թթ. Նոր Բայազետի մանկատան դաստիարակ-դասատու:
- 1941 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը գերազանցության դիպլոմով:
- 1941—1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար» և մի շարք այլ մեդալներով:
- 1946—1949 թթ. եղել է Երևանի պետհամալսարանի «Հայոց հին գրականություն» մասնագիտության գծով ասպիրանտ:
- 1948 թ. առ այսօր դասախոսում է Երևանի պետական համալսարանում:
- 1948—1956 թթ. վարել է կուսակցական դեկամար պաշտոններ (Կիրովյան կուլշրջկոմի քարտուղար, ՀԿԿ Երջադկոմի և ՀԿԿ կենտկոմի կուսակցական օրգանների բաժնի վարիչ):
- 1952—1953 թթ. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն:
- 1954 թ. շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Սովետական պատմավեպի մի քանի հարցեր և Գ. Դեմիրճյանի «Վարդանանքը» թեմայով դիսերտացիայի համար:
- 1955—1971 թթ. ընտրվել է Հայկական ՍՍՀ IV—VII գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր:
- 1956—1965 թթ. Երևանի պետական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր:
- 1957 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:
- 1959—1967 թթ. Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության

նախագահի տեղակալ:

- 1960 թ. հրավիրվել է Լեհաստան՝ Կրակովի համալսարանում դասախոսութուններ կարդալու հայոց հին և միջին դարերի գրականությունը բեմայով:
- 1963 թ. ղեկուցումով հանդես է եկել Դուբրովնիկում (Հարավսլավիա) կայացած «Համալսարանն այսօր» VIII միջազգային կոնգրեսում:
- 1965—1977 թթ. Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվ. գրականության ինստիտուտի տնօրեն:
- 1969 թ. շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ «Զորորդ դարի Հայաստանը հայոց հին պատմագրություն մեջ և Ստեփան Զորյանի պատմավեպերը» թեմայով դիսերտացիայի համար:
- ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:
- 1971 թ. ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ:
- 1975 թ. ղեկուցումով հանդես է եկել Վլադարի 1000-ամյակին նվիրված սիմպոզիումում (ԳԴՀ):
- 1976 թ. ղեկուցումով հանդես է եկել Բուդապեշտում կայացած համեմատական գրականագիտության միջազգային կոնգրեսում:
- 1978 թ. առ այսօր Հայաստանի ԳԱԱ նախագահությանն առընթեր գրադարանային խորհրդի նախագահ-ֆունդամենտալ գիտական գրադարանի տնօրեն:
- 1982 թ. պարգևատրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ «Վաստակագրով»:
- 1985 թ. ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 40-ամյակի առթիվ պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով և հորեյանական մեդալով:
- 1990 թ. շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:
- 1994 թ. ընտրվել է Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս:

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ АКАДЕМИКА НАН АРМЕНИИ ВАЧЕ СМБАТОВИЧА НАЛБАНДЯНА

- Ваче Смбатович Налбандян родился 25-го февраля 1919 г. в Нор-Баязете (ныне г. Камо).
- 1936 г. Окончил Нор-Баязетскую среднюю школу.
- 1936—1937 гг. Воспитатель-педагог в Нор-Баязетском детдоме.
- 1941 г. Окончил филологический факультет Ереванского гос. университета с дипломом отличия.
- 1941—1946 гг. Служил в Советской Армии. Был награжден медалями «За боевые заслуги», «За оборону Кавказа» и рядом других медалей.
- 1946—1949 гг. Был аспирантом по специальности «Древнеармянская литература».
- 1948 г.—н/вр. Читает курс лекций по древнеармянской литературе в Ереванском гос. университете.
- 1948—1956 гг. Занимал партийные руководящие должности (секретарь Кировского райкома, заведующий отделами партийных органов Ереванского горкома и ЦК КП Армении).
- 1954 г. Присуждена ученая степень кандидата филологических наук за диссертацию по теме: «Некоторые вопросы советского исторического романа и «Вардананк» Д. Демирчяна».
- 1955—1971 гг. Избирался депутатом Верховного Совета Армянской ССР IV—VII созывов.
- 1956—1965 гг. Проректор по научной работе Ереванского гос. университета.
- 1957 г. Присвоено ученое звание доцента.
- 1959—1967 гг. Заместитель председателя Президиума Верховного Совета Армянской ССР.

- 1960 г. Был приглашен в Польшу для чтения лекций в Краковском университете по древнеармянской литературе и армянской литературе средних веков.
- 1963 г. Выступил с докладом на VIII международном конгрессе по теме «Университет сегодня» в Дубровнике (Югославия).
- 1965—1977 гг. Директор Института литературы им. М. Абегиана АН Арм. ССР.
- 1969 г. Присуждена ученая степень доктора филологических наук за диссертацию на тему: «Армения четвертого века в древнеармянской историографии и исторические романы Стефана Зорьяна».
- Присвоено ученое звание профессора.
- 1971 г. Избран членом-корреспондентом АН АрмССР.
- 1975 г. Выступил с докладом на симпозиуме, посвященном 1 000-летию Ваймара (ГДР).
- 1976 г. Выступил с докладом на международном конгрессе по сравнительному литературоведению в Будапеште.
- 1978 г.—н/вр. Председатель Библиотечного совета при президиуме НАН Армении—директор Фундаментальной научной библиотеки.
- 1982 г. Награжден грамотой АН АрмССР «Вастакагир».
- 1985 г. К 40-летию победы над фашистской Германией награжден Орденом Отечественной войны II степени и юбилейной медалью.
- 1990 г. Присвоено почетное звание заслуженного деятеля науки Арм.ССР.
- 1994 г. Избран академиком ИАН Армении.

Վ. Ս. ՆԱԼԻՐԱՆԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հանրապետության գիտության վաստակավոր գործիչ Վաչե Սմբատի Նալբանդյանն իր երկարամյա եռանդուն գործունեությամբ ղգալի ավանդ է ներդրել հանրապետության գրականագիտական մտքի զարգացման, հայագիտական աշխատանքների կազմակերպման ու խթանման, գիտամանկավարժական կարգերի պատրաստման գործում:

Վ. Նալբանդյանը ծնվել է 1919 թ. փետրվարի 25-ին Նոր Բայազետ (այժմ՝ Կամո) քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Ծննդավայրում միջնակարգ կրթություն ըստանալուց հետո 1937 թ. նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որտեղ սովորելու տարիներին էլ նրա մեջ որոշակի նախասիրություն է ձևավորվում հայ հին և միջնադարյան գրականության նրկատմամբ:

Սկսվում է հայրենական մեծ պատերազմը, և 1941 թ. ամռանը Վ. Նալբանդյանը զորակոչվում է գործող բանակ: Ավարտելով Թեղավի գինվորական ուսումնարանը՝ նա մեկնում է Հյուսիսային Կովկաս՝ ռազմաճակատի առաջավոր գիծ: Ռազմաճակատում վիրավորվում է, ապաքինվելուց հետո շարունակում է գինվորական ծառայությունը: Պար-

գեատրվել է «Հայրենական պատերազմի II աստիճանի» շրջանշանով, «Մարտական ծառայության համար» և բազմաթիվ այլ մեդալներով:

Վ. Նալբանդյանը 1946 թ. զորացրվում է բանակից և շարունակում ուսումնառությունը Երևանի համալսարանի ասպիրանտուրայում՝ ընտրելով «Հայ հին գրականության պատմություն» մասնագիտությունը: 1949—1951 և 1954—1956 թթ. նա կուսակցական աշխատանք է կատարում Երևանի շրջանային և քաղաքային կազմակերպություններում, ՀԿԿ Կենտկոմում: Բայց իր խառնվածքով ու մղումներով առավելապես հակված լինելով դեպի գիտահետազոտական աշխատանքն ու դրա կազմակերպման բնագավառը՝ 1950-ական թթ. նա մի շարք պատասխանատու պաշտոններ է վարում հանրապետության գիտական և մշակութային կարևորագույն կենտրոններում. եղել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն (1952—1953 թթ.), պետական համալսարանի գիտական աշխատանքների գրծով պրոռեկտոր (1956—1965 թթ.), ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն (1965—1977 թթ.): 1978 թ. մինչև օրս Վ. Նալբանդյանը ԳԱԱ նախագահությանն առընթեր գրադարանային խորհրդի նախագահն է և ակադեմիայի ֆունդամենտալ գիտական գրադարանի տնօրենը:

1948 թ. սկսած, գրեթե կես դար, Վ. Նալբանդյանն անընդմեջ հայ հին գրականության պատմություն է դասավանդում համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Ուսանողների շատ սերունդներ են ունկնդրել նրա դասախոսությունները՝ առաջին անգամ մոտիկից հիմնավոր պատկերացում կազմելով հայ հին պատմագիրների ու բանաստեղծ-

ների գրական հարուստ ժառանգության մասին: Վ. Նալբանդյանը 1953 թ. պաշտպանում է թեկնածուական, իսկ 1969 թ՝ դոկտորական դիսերտացիա: 1971 թ. նա ընտրվում է հանրապետության ԳԱԱ թղթակից անդամ, 1994 թ.՝ ակադեմիկոս:

Ասպիրանտական տարիներից ի վեր Վ. Նալբանդյանն զբաղվում է գիտահետազոտական մի շարք թեմաների մըշակմամբ, հրատարակում բազմաթիվ գրքեր և ուսումնասիրություններ՝ նվիրված բազմադարյան հայ գրականության պատմության տարբեր խնդիրների: Նրա հետազոտական գործունեության հիմնական բնագավառը հին և միջնադարյան մատենագրությունն է՝ գրապատմական և գեղարվեստական բացառիկ նշանակություն ունեցող հանգուցային խնդիրների արծարծմամբ:

Նրա ուշադրության կենտրոնում են ազգային գրերի ստեղծման, ոսկեդարի գրական մշակույթի կազմավորման, հայ հին պատմագրության գաղափարախոսական, ճանաչողական և գեղարվեստական յուրահատկության հարցերը: Այս առումով հիշատակման են արժանի «Մեսրոպ Մաշտոց», «Ազգային գրականության կազմավորման գործում անտիկ, բյուզանդական և տեղական ավանդույթների դերի մասին» ծավալուն հետազոտությունները և Եղիշեին նըվիրված մենագրությունը: Հայկական գրերի գյուտի մասին շատ է գրվել, և ապագայում նույնպես սերունդները հաճախ են անդրադառնալու այդ բախտորոշ իրադարձության իմաստավորմանը: Վ. Նալբանդյանը, սակայն, երևույթին նայում է մի տեսանկյունից՝ ցույց տալով գրերի ստեղծման ազգային-քաղաքական և հոգևոր-մշակութաբանական դրդապատճառները՝ ընդդեմ պարսկական և բյուզանդական

բռնութիւնների, հանուն հայութեան գոյատեման: Այս կապակցութեամբ անցյալում արվել են ոչ քիչ առողջ ու ճիշտ կռահումներ՝ հիմնականում մատնանշելով գրերի ստեղծման ուղղութեամբ հայոց Վրամշապուհ թագավորի ցուցաբերած եռանդուն շահագրգռվածութիւնը: Մինչդեռ բանասերը, հատկապես ծանրանալով Մաշտոցի կյանքի և գործունեութեան պետական, պալատական ծառայութեան շրջանի վրա, կարևոր նշանակութիւն է տալիս սկզբնաղբյուրներում բազմիցս ընթերցված, բայց առանձին ուշադրութեան չարժանացած այնպիսի տվյալների, որոնց համատեղումն ու նպատակադիր քննութիւնը որակական նոր լիցք է հաղորդում խնդրի ազգային-քաղաքական բնույթի լուսաբանմանը:

Անդրադառնալով V դարի հայ ինքնուրույն մատենագրութեան թռիչքատիպ և յուրօրինակ կազմավորման նախադրյալների հարցին՝ հետազոտողը զարգացնում է այն տեսակետը, թե այդ գործում անտիկ և բյուզանդական մրջակույթների ստեղծագործական յուրացման, հունարենից և այլ լեզուներից արված բազմաբնույթ, հարուստ ու մեծարժեք թարգմանութիւնների ազգայնացման հետ մեկտեղ կարևոր ու վճռական դեր են խաղացել նաև հեթանոսական Հայաստանի մատենագրական և բանահյուսական ավանդույթները: Թեզն առաջ քաշելիս ուսումնասիրողը բնականաբար հենվում է ազգային հինավուրց գրավոր հուշարձանների և հարուստ բանահյուսութեան գոյութեան մասին օտար ու հայ աղբյուրներում առկա վկայութիւնների վրա: Առանձնապես զնահատելի են ուսումնասիրութեան այն մասերը, որտեղ փորձ է արվում ցույց տալու, թե անտիկ արվեստի տեսութիւնից յուրացված առանձին դրույթներ

ինչպես են Հայաստանի իրականության յուրահատկություններին թելադրանքով վերամշակել ու զարգացրել հայ մտածողները:

Եղիշեին նվիրված մենագրությունը, որն ամփոփում է պատմիչի կյանքի և ստեղծագործության հանգամանալից քննությունը, հատկապես ուշագրավ է «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» մատյանի գեղարվեստական շերտերի հայտնաբերման, համակարգման և լուսաբանման տեսակետից: Իր վերլուծությունները հեղինակը ձգտում է տանել հայ իրականության մեջ պատմագրական ժանրի ձևավորման խնդիրը պարզաբանելու հունով, շեշտը դնելով հայ պատմագրության ճանաչողական և գեղարվեստական բնույթի միասնականության, աշխարհիկ-քաղաքական բովանդակության և հայրենասիրական-քաղաքացիական պաթոսի բացահայտման վրա: Եղիշեի արվեստը նա մեկնաբանում է բազմակողմանիորեն, մի կողմից ցույց տալով այն ընդհանրությունները, որոնցով նրա երկը աղերսվում է անտիկ պատմագրության (հատկապես Թուկիդիդեսի և Տակիտոսի երկերի օրինակով) ժանրային գլխավոր գծերի հետ, մյուս կողմից՝ այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին դարաշրջանի հայ կյանքի ու մտածողության հանգամանքներով: Աշխատությունն ունի տեսական և ճանաչողական արժեք: Նկատի ունենք թե՛ պատմագրական արձակի վերաբերյալ անտիկ մտածողների, հայ պատմիչների, եվրոպացի, ռուս և հայազգի հետազոտողների արած տեսական բնութագրումների առկայությունը և թե՛ ուսումնասիրվող հուշարձանից բերված ուղղակի վկայակոչումները՝ հիրավի խնամքով ընտրված, առաջ քաշված դրույթները անվերապահորեն հաստատող գեղեցիկ հատվածներ,

որոնք պատիվ կբերեին անգամ ամենահարուստ մշակույթն ունեցող ցանկացած քաղաքակրթութեան:

Վ. Նալբանդյանի գիտական հետաքրքրությունների ուղորտում նշանակալից տեղ են գրավում նաև հայ միջնադարյան քնարերգուները: Մի կողմ թողնելով «Միջնադարի հայ տաղերգուներ» գրքույկը, որ, փաստորեն, ներկայացնում է X—XVIII դարերի դասական բանաստեղծների գրական վաստակի հանրամատչելի բնութագրությունը, պետք է նշել, որ գրականագետը հիմնականում մասնավոր քննության նյութ է դարձրել երեք խոշոր մեծությունների՝ Ներսես Շրենորհալու, Գրիգոր Նարեկացու և Սայաթ-Նովայի ստեղծագործական ժառանգության հարցերը: Ընդ որում՝ վերջին երկու քնարերգուներին նա անդրադառնում է առանձին մենագրական աշխատանքներով, որոնք լույս են տեսել հայերեն և ռուսերեն լեզուներով: Այս աշխատությունների մեջ կարելի է նկատել մի ընդհանուր գիծ՝ իր ուսումնասիրության ընթացքում Վ. Նալբանդյանն, ըստ ամենայնի, հենվում է հիշյալ բանաստեղծների մասին առկա ողջ գիտական գրականության, նախորդ հետազոտողների ձեռքբերումների վրա, միաժամանակ նկատում և բացահայտում է նաև շատ նոր կողմեր, որոնք հատկապես հետաքրքիր են մեր օրերի համար: Դրանց թվին կարելի է դասել Գրիգոր Նարեկացու «Մատյանում» մարդու ճակատագրի, մարդկայինի և աստվածայինի փոխհարաբեխության կամ Սայաթ-Նովայի հումանիզմի ինքնատիպ գծերի վերլուծությունները, որոնց զգալի տեղ է հատկացնում հետազոտողը:

Հիշատակված հանգուցային խնդիրները, նշանավոր դեմքերի կյանքն ու գործերը քննելիս գրականագետը մըշտապես ձգտում է բացահայտել հայ հին գրականության

մեջ առկա համամարդկային արժեքները, հայ մատենագիր-ներին ու բանաստեղծներին զնահատել միջազգային գրական փորձի դիրքերից: Դա հատկապես բնորոշ է Վ. Նալբանդյանի այն գործերին, որոնք հասցեագրված են այլալեզու ընթերցողին և տպագրվել են ռուսերեն: Առաջին հերթին նրկատի ունենք բարձրագույն դպրոցի համար Մոսկվայում հրատարակված հայ գրականության դասագիրքը, որի հին և միջնադարյան գրականության գլուխները պատկանում են նրա գրչին, մասնավորապես՝ V—XVIII դարերի հայ գրականությանը վերաբերող հատվածները, որոնք զետեղված են այնպիսի մի հեղինակավոր ու կոթողային հրատարակության մեջ, որպիսին է «Համաշխարհային գրականության պատմություն» բազմահատորյակը: Այդ հրատարակության 2—5-րդ հատորներում տեղ գտած հայ գրականության բաժինները շարադրելու համար հեղինակը մեծ ջանքեր է թափել՝ ներկայացնելով մեր ազգային գրական մշակույթի գլխավոր արժեքները:

Հայ մատենագրական հուշարձանների հետազոտման ուղղությամբ Վ. Նալբանդյանի կատարած որոնումները առանձին դեպքերում դուրս են գալիս գրականագիտական քննության սահմանից և ընդունում պատմագիտական բրնույթ: Նման աշխատանքներից են «Հայերի կողմից պարսկական տիրապետության դեմ ուղղված 451 թ. ապստամբության սոցիալ-քաղաքական պատճառների հարցի շուրջը», «451 թ. ազատագրական շարժման հետ կապված մի հարց», «Գնեկ-Տիրիթյան վիպական ավանդության պատմական հիմքի հարցի շուրջը», «Հայոց թագավորության վերականգրման հարցը Վարդանանց պատերազմի ժամանակ» ծավալուն հոդվածները, որոնք գրավոր անլիսալ սկզբնաղբյուր-

ներում պահպանված մի շարք փաստերի համադրման վերլուծութայամբ և նորովի իմաստավորմամբ շոշափում են վաղ ավատատիրության ժամանակների հայոց պատմության՝ Արշակ Երկրորդի վարած ազգային կենտրոնաձիգ քաղաքականության և Վարդանանց ապստամբության հետ առնչվող խնդիրներ՝ ստանալով համոզիչ բացատրություն: Օրինակ՝ սկզբունքային կարևոր արժեք է ներկայացնում նրա հաստատած այն միտքը, թե Ավարայրի պատերազմի նախօրեին հայ հայրենասեր նախարարները նպատակ են ունեցել հանձին Վարդան Մամիկոնյանի վերականգնել հայոց թագավորությունը: Մեր հին մատենագիրների թողած առանձին աղոտ տեղեկությունների հիման վրա առաջ քաշված այս տեսակետը ժամանակին արժանացել է նշանավոր պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի անվերապահ պաշտպանությանը՝ տեղ գտնելով նրա՝ «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» առաջին հատորում:

Տասնամյակներ շարունակ Վ. Նալբանդյանին դրողեցրել են նաև ժամանակակից պատմագեղարվեստական գրականության հարցերը: Իր հետազոտական գործունեության հենց սկզբից նա կողմնորոշվեց դեպի պատմության գեղարվեստական մարմնավորման խնդիրների քննությունը, մի բնագավառ, որ պահանջում է բանասերի, գրականագետի ու պատմաբանի հմտություն: Այս շարքի առաջնեկն էր «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը» մենագրությունը, որին հաջորդեցին Ստ. Զորյանի եռապատումին («Պապ թագավոր», «Հայոց բերդը», «Վարադգատ»), Վ. Դավթյանի «Թոնդրակեցիներին» և Պ. Զեյթունցյանի «Արշակ Երկրորդին» նվիրված ուսումնասիրությունները: Նշված ստեղծագործությունների գաղափարա-

կան ու գեղարվեստական առանձնահատկությունները գր-
րականագետը հիմնականում լուսաբանում և գնահատում
է մատենագրական աղբյուրների և պատմական իրականու-
թյան հետ ունեցած առնչակցության մեջ, շոշափելով փաս-
տի և ստեղծագործական հնարանքի փոխհարաբերության,
գրողի կողմից պատմական ճշմարտության հայտնաբեր-
ման, կերպարի և սյուժեի ձևավորման խնդիրները: Այս աշ-
խատություններում ուսումնասիրողը ոչ միայն նոր և ու-
շագրավ տվյալներով վերահաստատում է պատմագեղար-
վեստական երկի պատմականության և արդիական նշանա-
կության չափանիշի վերաբերյալ հայտնի դրույթը, այլ և
բացահայտում և ընդհանրացնում է մատենագրական նյու-
թերի ստեղծագործական նորօրյա մշակման, գեղարվես-
տական հին ավանդույթների յուրովի օգտագործման ու
կատարելագործման այն ուղիները, որ նվաճել է նորագույն
շրջանի գրական փորձը: Միաժամանակ նշելի է, որ հե-
ղինակն իր վերլուծություններն անում է նախորդ գրական
մշակումների (Ղ. Ալիշանի, Գ. Սրվանձտյանի, Ս. Հայկու-
նու, Մ. Պեշիկթաշլյանի, Բաֆֆու և ուրիշների համապա-
տասխան երկերի) արդյունքների վերագնահատման ֆոնի
վրա՝ ի հայտ բերելով նոր ու նարագույն շրջանների գր-
րականության մեջ տվյալ թեմաների գծով ազգային գե-
ղարվեստական մտաթողության խնրնդհատ հարստացման
իրողությունը: Հիշարժան է նաև, որ իր կարծիքները հիմ-
նավորելիս նա ոչ միայն լայնորեն օգտագործում է գրական-
գեղագիտական մտքի անհրաժեշտ դիտարկումները (Հեգե-
լի, Լեսինգի, Բալզակի, Բելինսկու, Միքայել Նալբանդյա-
նի, Բաֆֆու, Ա. Տոլստոյի, Ստ. Զլորինի և ուրիշների տե-

սակետները), այլև վստահորեն հենվում քննական պատմագրության (Ա. Գարագաշյան, Մ. Օրմանյան, Ն. Ադոնց, Հ. Մանանդյան, Ա. Հովհաննիսյան) կատարած եզրակացությունների վրա:

Պետք է ասել, որ Վ. Նալբանդյանի բոլոր հիմնական աշխատությունները տպագրվել են թարգմանաբար՝ ռուսերեն, իսկ «Թբիլիսին հայ մատենագրության մեջ» գիրքը, որը վերլուծաբար ընդգրկում է վրաց հազարհինգհարյուրամյա մայրաքաղաքին վերաբերող աղբյուրագիտական հարուստ տեղեկություններ, նաև՝ վրացերեն:

Տասնամյակների ընթացքում Վ. Նալբանդյանը ծավալել է գիտակազմակերպչական խոշոր աշխատանք՝ մշտապես իր ուշադրության կենտրոնում պահելով հայագիտության հետագա զարգացման, մասնագետների որակի բարձրացման և գիտամանկավարժական կադրերի պատրաստման հոգսերը: Շատերն են հիշում շնորհալի երիտասարդներին գրականագիտության մեջ ներգրավելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերը: Նրա անմիջական ղեկավարությամբ հայոց հին և միջնադարյան գրականության գծով մասնագիտացել են շատերը, որոնք այսօր գիտական տարբեր կոչումներ ստացած, օգտակար աշխատանք են կատարում հանրապետության բուհերում և գիտահետազոտական հիմնարկներում:

Վ. Նալբանդյանը ղեկուցումներով հանդես է եկել գրականագիտական միջազգային համաժողովներին:

Գիտական և գիտակազմակերպչական գործունեությանը ղուգընթաց Վ. Նալբանդյանը զբաղվել է նաև հասարակական եռանդուն աշխատանքով. եղել է Հայաստանի Գերագույն

խորհրդի (1955—1971 թթ.) պատգամավոր, հանրապետու-
թյան Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տե-
ղակալ (1959—1967 թթ.): Որպես խմբագրական հանձնա-
խմբի և գրականության գիտաճյուղային խորհրդի անդամ
նա գործուն մասնակցություն է ունեցել հայկական հանրա-
գիտարանի աշխատանքներին:

Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս՝ Է. Մ. ԶՐԲԱՇՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու՝ Վ. Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ, НАУЧНОЙ И ПЕДАГОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АКАДЕМИКА В. С. НАЛБАНДЯНА

Академик Национальной академии наук Армении, доктор филологических наук, профессор, заслуженный деятель науки республики Ваче Смбатович Налбандян своей долголетней плодотворной деятельностью внес значительный вклад в дело развития литературоведческой мысли республики, организации и стимулирования арменоведческих работ, подготовки научно-педагогических кадров.

В. Налбандян родился 25 февраля 1919 г. в городе Нор-Баязет (ныне Камо), в семье ремесленника. Получив среднее образование в родном городе, в 1937 г. он поступает на филологический факультет Ереванского государственного университета. Уже в годы университетской учебы в нем наблюдается целеустремленный интерес к древней и средневековой армянской литературе.

Начинается Великая Отечественная война, и летом 1941 г. В. Налбандян призывается в действующую армию. Окончив военное училище в Телави, оказался на передовой линии фронта, на Северном Кавказе. В годы войны был ранен, после выздоровления продолжает военную службу. Он награжден Орденом Отечественной войны II степени, медалью «За боевые заслуги» и многими другими медалями.

В 1946 г. В. Налбандян демобилизуется из армии

и продолжает учебу в аспирантуре Ереванского университета, избрав своей специальностью историю древней армянской литературы. В 1949—1951 и 1954—1956 гг. он на руководящей работе в Ереванской районной и городской организациях, в ЦК Компартии Армении. Однако будучи по своему характеру и интересам преимущественно склонен к научно-исследовательской работе и к сфере ее организации, он с 1950 гг. переходит на ряд ответственных должностей в важнейших научных и культурных центрах республики—директор Ереванского Матенадарана имени Месропа Маштоца (1952—1953 гг.), проректор по научной работе государственного университета (1956—1965 гг.), директор Института литературы им. М. Абегамяна Национальной академии наук Армении (1965—1977). С 1978 г. по сей день В. Налбандян является председателем Библиотечного совета при президиуме НАН республики—директором Фундаментальной научной библиотеки Академии.

Начиная с 1948 г., почти полувека, В. Налбандян без перерывов читает курс древней армянской литературы на филологическом факультете университета. Многие поколения студентов, слушая его лекции, основательно приобщались к богатому наследию древних армянских историографов и поэтов.

В. Налбандян в 1953 г. защищает кандидатскую, а в 1969 г.—докторскую диссертации. В 1971 г. он избирается членом-корреспондентом НАН республики, а в 1994—действительным членом той же академии.

Еще с аспирантских лет В. Налбандян занимается разработкой целого ряда научно-исследовательских тем, издает множество книг и исследований, посвященных различным проблемам истории многовековой армянской литературы. Основной сферой его исследова-

тельской деятельности является древняя и средневековая армянская литература, изучение ее узловых проблем, имеющих исключительно историко-литературное и художественное значение.

Прежде всего следует отметить, что в центре его внимания находились вопросы создания национального алфавита, формирования литературной культуры золотого века, идеологического, познавательного и художественного своеобразия древней армянской историографии, исторической прозы. В этом смысле достойны упоминания объемистые исследования «Месроп Маштоц», «К вопросу о роли античных, византийских и местных традиций в становлении национальной литературы» и монография, посвященная Егише. О создании армянского алфавита писалось много, да и в будущем также будут обращаться к осмыслению этого исторически-кардинального явления. В. Налбандян, однако, рассматривает это явление своеобразно, выявляя национально-политические и духовно-культурные побудительные причины и исторические предпосылки создания этого алфавита, направленного против персидского и византийского насилия во имя существования армян. В этой связи в прошлом высказывалось немало положительных и верных предположений и догадок, в основном с указанием на энергичную заинтересованность в деле создания алфавита армянского царя Врамшапуха, в то время как В. Налбандян, особенно сосредоточиваясь на времени государственной, дворцовой службы в жизни и деятельности Маштоца, придает важное значение некоторым неоднократно прочитанным, но не удостоенным специального внимания фактам и данным, упоминаемым в источниках. Соотношение и сопоставление, а также целеустремленное их изучение открывают новое качественное содержание в исследовании национально-политической природы проблемы.

Обращаясь к вопросу предпосылок стремительного и своеобразного формирования самосущности армянской литературы V в., исследователь развивает ту точку зрения, согласно которой вместе с творческим освоением традиций античной и византийской культуры, с национализацией многообразных богатых и ценных переводов с греческого и других языков, важную и решающую роль играли также и традиции литературы и фольклора языческой Армении. Выдвигая этот тезис, исследователь, естественно, ссылается и опирается на древние письменные национальные памятники, а также зарубежные и армянские свидетельства существования богатого народного творчества. Особенно ценны те фрагменты исследования, в которых делается попытка показать, как отдельные заимствованные из теории античного искусства идеи в силу своеобразия действительности Армении переосмысливались и развивались армянскими мыслителями.

Монография, посвященная Егише, которая содержит в себе обстоятельное исследование жизни и творчества историографа, автора исторической прозы, особенно примечательна обнаружением художественных пластов книги «О Вардане и Войне Армянской», их классификацией и исследованием. Анализ этого произведения автор стремится направить в русло изучения вопроса формирования в армянской действительности жанра исторической прозы, акцентируя при этом феномен единства познавательной и художественной природы армянской исторической прозы, ее светски-политического содержания и патриотически-гражданского пафоса. Искусство слова Егише автор рассматривает во всем его многообразии и сложности, с одной стороны, раскрывая те общности, которые соотносят его с главными жанровыми чертами античной историографии

(в частности, на примерах произведений Фукидида и Тацита), с другой стороны, изучая те особенности и то своеобразие, которые обусловлены обстоятельствами армянской жизни и движением мысли эпохи. Работа эта представляет, безусловно, теоретическую и познавательную ценность. Мы имеем в виду как наличие теоретических дефиниций, касающихся исторической прозы, античных мыслителей, армянских историографов, русских и других исследователей, так и прямые свидетельства, приведенные из самого изучаемого памятника, отобранные с подлинной бережливостью, отдельные фрагменты текста, подтверждающие выдвинутые теоретические положения и научные идеи, достойные любой цивилизации, обладающей самой богатой культурой.

В сфере научных интересов В. Налбандяна значительное место занимают также и средневековые армянские лирики. Не касаясь специально книжки «Средневековые армянские лирики», в которой фактически содержится популярная характеристика литературного наследия классических поэтов X—XVIII вв., следует отметить, что литературовед особенно глубоко и обстоятельно исследовал творчество трех крупнейших поэтов — Нерсеса Шнорали, Григора Нарекаци и Саят-Новы. Причем к наследию двух последних поэтов он обращается в отдельных монографических работах, изданных на армянском и русском языках. В этих трудах можно обнаружить одну общую для них черту — в ходе своего исследования В. Налбандян, судя по всему, опирается на всю научную литературу, посвященную вышеупомянутым поэтам, на достижения предшествующих исследователей, однако вместе с тем обнаруживает и раскрывает также множество новых сторон и граней, которые особенно интересны в наше время. К их числу

следует отнести анализ судьбы человека в «Книге скорбных песнопений» Григора Нарекаци, соотношения в этом произведении человеческого и божественного начал или своеобразных черт гуманизма Саят-Новы, которым исследователь уделяет особое внимание.

Исследуя упомянутые узловые и фундаментальные проблемы, жизнь и творчество перечисленных крупнейших авторов, литературовед постоянно стремится раскрыть общечеловеческие ценности древней армянской литературы, а также изучить творчество армянских писателей в контексте мировой литературы, ее художественного опыта. Это особенно характерно для тех трудов В. Налбандяна, которые адресованы иноязычному читателю и изданы на русском языке. Мы прежде всего имеем в виду изданный в Москве учебник по армянской литературе для высшей школы, в котором главы, посвященные древней и средневековой армянской литературе, принадлежат его перу, и особенно разделы, посвященные армянской литературе V—XVIII вв. в таком авторитетном и фундаментальном издании, как многотомник «История всемирной литературы». Изложение разделов, посвященных армянской литературе в II—V томах этого издания потребовало от автора огромных усилий, которые помогли ему представить главные ценности нашей национальной литературы.

Творческие поиски В. Налбандяна в направлении изучения памятников армянской литературы в отдельных случаях выходят за пределы литературоведческого исследования и обретают историко-научный характер. К числу подобных работ следует отнести фундаментальные статьи В. Налбандяна «К вопросу о социально-политических причинах восстания армян против персидского господства 451 года», «Об одном вопросе, связанном с освободительным движением 451

года», «К вопросу об исторической основе Гнел-Тиригского эпического предания», «Вопрос о восстановлении армянского царства во время Войны Варданидов», которые на основании сопоставительного анализа целого ряда фактов, сохранившихся в различных письменных первоисточниках, и их нового осмысления и истолкования исследуют различные стороны армянской истории раннего феодализма—вопросы, связанные с центристремительной национальной политикой, проводимой Аршаком Вторым, и восстанием Варданидов. Эта проблематика исследована В. Налбандяном глубоко аргументированно и научно достоверно. К примеру, принципиально важное значение имеет мысль автора о том, что накануне Аварайрского сражения армянские нахарары преследовали цель восстановить в лице Вардана Мамиконяна Армянское царство. Эта точка зрения, выдвинутая на основе отдельных разрозненных и скудных сведений, оставленных нам нашими древними летописцами, в свое время нашла положительный отклик у выдающегося историка, академика Ашота Иоанисяна, которая содержалась в первом томе его труда «Очерки истории армянской освободительной мысли».

